

նութեանը վրայ սքանչացած՝ « Տիւղը (†ՏՂ. ուղ-
ղորդն) ինծի՛ կանչեցէք » հրամանը տուած ըւ-
լայ (°): Սակայն եթէ այս զրոյցը բաւական ստու-
գութիւն չունի, անծանօթ կը մնայ այս գերդաս-
տանին անուանակոչութեան բուն պատճառը:

Սերգիս իւր ամուսնէն՝ որ էր Նուրի խա-
թուն († 1738), երկու զաւակ ունեցաւ Յով-
հաննէս եւ Տէվլէթ¹: 1721ին Մահտեսի Սեր-
գիս յաստեաց փոխեցաւ եւ Գուրուչէշմէի հան-
դըստարանը գրուեցաւ:

¹ Այս վերջինս հայր էր Պարոն Սերգսի՝ որ խեւա-
վերտեսնց կամ Սոմալեանց փեսայացաւ յերկրորդ ամուս-
նութեան: Իսկ Տէվլէթի երկրորդ որդին էր Յովհաննէս:

